ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

<<ՋՐԱՐԲԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>ՊՈԱԿ-Ի

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ

ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

ՏՆՕՐԵՆ՝ Ն.ՋԱՔԱՐՅԱՆ

Արտոնված է

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**2022-2023 ուստարի**

ՀՀ Արմավիրի մարզ

<<Ջրարբիի միջն. դպրոց>>ՊՈԱԿ 6-րդ դաս.

*Դասղեկ՝ Ղուկասյան Մարիա Արշակի*

# ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

- ✓ Դասղեկի գործունեության հիմնական նպատակներն ու խնդիրները
- ✓ Դասղեկի պարտականությունները
- ✓ Դասղեկի աշխատանքի համակարգը

Հազիվ թե կա այնքան կեղտոտ հայելի, որը, այնուամենայնիվ, թեկուզ որևէ բան չնկատի, հազիվ թե կա այնքան խորդուբորդ տախտակ, որի վրա, այնուամենայնիվ, որևէ բան որևէ կերպ գրել հնարավոր չլինի:

Յան Ամոս Կոմենսկի

«Չկա ավելի բարձր արվեստ, քան դաստիարակելու արվեստը:

Իմաստուն դաստիարակը կերտում է մի կերպար, որին նայելով ցնծում են թե՛ մարդիկ և թե՛ Աստված»:

Հովհաննես Ոսկեբերան

**Դասղեկի գործունեության հիմնական նպատակը** սովորողների համարայնպիսի միջավայրի ապահովումն է,ուր նրանք հնարավորություն կունենան ինքնաբացահայտվելու,զարգացնելու սեփական կարողություններն ու հմտությունները:

**Դասղեկական գործունեության հիմնական խնդիրներն են.**

- դասարանական կոլեկտիվի ձևավորումը,
- անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող հոգեբանամանկավարժական միջավայրի ապահովումը,
- առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորումը,
- սովորողների իրավունքներն ու շահերը պաշտպանելը,
- դաստիարակչական գործունեության բազմազան միջոցներով արդյունավետ հարաբերությունների համակարգի ստեղծումը,
- դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպումը,
- սովորողների, սովորողների և մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորումը,
- սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը,
- սովորողների ստեղծագործական, հասարակայնամետ գործունեության կազմակերպումը:

- անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.
- իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.
- կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.
- դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

# ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԻ ՁԱԵՐԸ



- Զրույցներ
- Բանավեճեր
- Հանդիպումներ հետաքրքիր մարդկանց հետ
- Վիկտորինաներ
- Քննարկումներ տարբեր թեմաներով
- Ինտերակտիվ խաղեր
- Էքսկուրսիաներ
- Թատերական ներկայացումներ
- Կինոդիտումներ

# ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԻ ՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

- ընտրել թեման
- առանձնացնել նպատակը
- կազմել պլան
- աշակերտներին տալ համապատասխան հանձնարարականներ



# ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ծանոթանալ աշակերտների անձնական գործերին
- զրուցել դասվարի, դասավանդող ուսուցիչների հետ
- զրուցել աշակերտների ծնողների հետ
- կատարել աշակերտների հոգեբանամանկավարժական հետազոտություն
- զրուցել աշակերտների հետ
- հանդիպել աշակերտների հետ դպրոցից դուրս



Եթե մանկավարժությունը ուզում է մարդուն դաստիարակել բոլոր տեսակետներից, ապա նրան պետք է ճանաչի բոլոր տեսակետներից

Կ. Ուշինսկի

# ԿԱՏԱՐԵԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սովորողների
- Ընտանեկան դրությունը
- Սոցիալական կարգավիճակը
- Առողջական, հոգեբանական խնդիրները
- Նախասիրությունները
- Կարողություններն ու մնտությունները
- Կամային հատկանիշները




Ճանաչի՛ր, որ կրթես...

# 2022-2023 ուստարի դասղեկի 6-րդ դասարանի թեմատիկ պլան

| N | ԹԵՄԱ | ԺԱՄ |
|---|---|---|
| 1 | Դասարանական ակտիվի ընտրություն | 1 |
| 2 | *Հայկական ավանդույթները,որոնցով հպարտանում ենք:* | 1 |
| 3 | Հայաստանի անկախության մասին պատմական ակնարկ | 1 |
| 4 | *Ուզում եմ ունենալ պետություն,որտեղ…* | 1 |
| 5 | *Ընտանիք և պարտականություն:* | 1 |
| 6 | Մարդու իրավունքներ և քաղաքացիություն | 1 |
| 7 | Բարոյականություն և իրավունք | 1 |
| 8 | Ինչպե՞ս կուզեիր ապրել | 1 |
| 9 | Իմ իրավունքները | 1 |
| 10 | Ո՞վ է պատասխանատու իմ իրավունքների համար | 1 |
| 11 | *ՈՒզում եմ ունենալ պետություն,որտեղ…* | 1 |
| 12 | *Արդար, ազնիվ և օրինապահ:* | 1 |
| 13 | Քաղաքացիություն | 1 |
| 14 | Արդար,ազնիվ և օրինապահ | 1 |
| 15 | Ազնվության մասին | 1 |
| 16 | Վարվեցողության կանոնները հասարակական վայրերում | 1 |
| 17 | Ինչպես ծանոթանալ և ներկայանալ | 1 |
| 18 | *Ում կուզեի նմանվել:* | 1 |
| 19 | *Ինչ է ընկերությունը և բարեկամությունը:* | 1 |
| 20 | *Իմ լավագույն ընկերը:* | 1 |
| 21 | *Իմ հետաքրքրությունները և նախասիրությունները:* | 1 |
| 22 | *Ում եմ ես վստահում:* | 1 |
| 23 | Անհանդուրժողականության դրսևորումները | 1 |
| 24 | Ներողամտություն:Հանդուրժողականություն | 1 |
| 25 | Ծանոթանալը և ներկայանալը | 1 |
| 26 | Ողջույնի ձևերը | 1 |
| 27 | Կեցվածք և քայլվածք | 1 |
| 28 | Նվերների ընդունումը | 1 |
| 29 | Բոլորս տարբեր ենք,բոլորս հավասարապես արժանի ենք հարգանքի | 1 |
| 30 | Ինչպես հասնել հաջողության | 1 |
| 31 | Աշխատասիրություն և լավատեսություն | 1 |
| 32 | <<Հայի ուժը>>թեմայով զրույց | 1 |
| 33 | Հաղթանակի ուժը միասնության մեջ է | 1 |
| 34 | Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին: | 1 |

# ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

## Ծնողական ժողովների տեսակները

- Կազմակերպչական
- Թեմատիկ
- Համադպրոցական
- Ամփոփիչ

## Նախապատրաստման կանոնները

- Ընտրել թեման
- Ծնողների հետ համաձայնեցնել ժամը
- Ներկայացնել օրակարգը
- Սահմանել տևողությունը
- Առանձնացնել կարևոր հարցերը

## Ընթացքը

- Ժողովը սկսեք բարձր տրամադրությամբ և ողջույնի խոսքով:
- Ծնողներին ներկայացրեք ժողովի օրակարգը:
- Խոսեք նախ դրական հարցերի մասին:
- Առանձին աշակերտների խնդիրները մի դարձրեք ընհանուր քննարկման թեմա:
- Աշակերտների բացասական կողմերը ներկայացնելիս եղեք նրբանկատ:
- Օրակարգի յուրաքանչյուր հարց քննարկելուց հետո անպայման լսեք ծնողների առաջարկությունները:
- Կատարեք ծնողների հաշվառում:
- Հետևեք ժամանակին. ժողովը չպետք է տևի մեկուկես ժամից ավելի:
- Ժողովն ավարտեք որևէ հետաքրքիր և ուրախալի տեղեկության հաղորդմամբ. հիշեք՝ յուրաքանչյուր ծնող ժողովից պետք է հեռանա լավ տրամադրությամբ, հաջորդ ժողովին անպայման մասնակցելու մեծագույն ցանկությամբ:

## Ծնողական ժողովներ

| N | Թեմա | Նպատակը | Ժամկետը |
|---|---|---|---|
| 1<br><br>2.<br><br><br><br>3.<br><br><br>4. | Կազմակերպչական հարցեր<br><br>Դասարանի ծնողական խորհրդի անդամների և նախագահի ընտրություն:<br><br>2022-2023ուսումնական տարվա աշխատանքների պլանավորում<br><br>Ընթացիկ հարցեր | Աշակերտներին միանման դպրոցական համազգեստով ապահովելու հարցերի քննարկում:<br>Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում:<br><br>Դասարանի ծնողական խորհուրդի ընտրություն<br><br>Դասղեկը ներկայացնում է ուսումնական տարվա կատարվելիք աշխատանքների մասին | սեպտեմբեր |
| 1.<br><br>2.<br>3<br><br><br>4. | 2022-2023 ուսումնական տարվա միամսյակի ամփոփում<br>Առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում:<br>Ընտանիք-դպրոց կապի ամրակայում<br><br>Ընթացիկ հարցեր | Ամփոփել 2022-2023ուսումնական տարվա միամսյակի գնահատականները:<br>Առաջադիմության բարձրացմանն ուղղված աշխատանքներ<br>Ընտանիքի և դպրոցի կապի կարևորությունը | հոկտեմբեր |
| 1.<br><br><br>2.<br><br>3. | 2022-2023 ուսումնական տարվա միամսյակի գնահատականները և վարքը:<br>Անհարգելի բացակայությունների քննարկում;<br>Ընթացիկ հարցեր | Ամփոփել 2022-2023ուսումնական տարվա միամսյակի գնահատականներըև վարքը:<br><br>Առաջադիմության բարձրացմանն ուղղված աշխատանքներ | նոյեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| 1<br><br>2 | 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ամփոփում,բացակայությունները, վարքը;<br><br>Ընթացիկ հարցեր | Ամփոփել2022-2023ուսումնական տարվա 1-ին կիսամյակը | դեկտեմբեր |
| 1<br><br>2.<br><br>3. | Կազմակերպչական հարցեր<br><br>Դպրոց-ընտանիք կապը<br><br>Ընթացիկ հարցեր | Աշակերտներին ընդգրկել տարաբնույթ միջոցառումների կազմակերպմանը<br>Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում: | հունվար |
| 1.<br><br>2.<br><br>3. | 2022-2023 ուսումնական տարվա միամսյակի ամփոփում<br><br>Առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում:<br>Ընթացիկ հարցեր | Ամփոփել 2022-2023ուսումնական տարվա միամսյակի գնահատականները:<br>Առաջադիմության բարձրացմանն ուղղված աշխատանքներ | փետրվար |
| 1.<br><br>2.<br><br>3 | 2022-2023 ուսումնական տարվա միամսյակի գնահատականները և վարքը:<br>Անհարգելի բացակայությունների քննարկում;<br>Ընթացիկ հարցեր | Ամփոփել 2022-2023ուսումնական տարվա միամսյակի գնահատականներըև վարքը:<br><br>Առաջադիմության բարձրացմանն ուղղված աշխատանքներ | մարտ |

| | | | |
|---|---|---|---|
| 1.<br><br>2. | 2022-2023 ուսումնական տարվա միամսյակի գնահատականները և վարքը:<br>Անհարգելի բացակայությունների քննարկում;<br>Ընթացիկ հարցեր | Ամփոփել 2022-2023ուսումնական տարվա միամսյակի գնահատականներըև վարքը:<br><br>Առաջադիմության բարձրացմանն ուղղված աշխատանքներ | ապրիլ |
| 1<br>2<br>3 | Տարեվերջյան առաջադիմության և վարքի ամփոփում<br>Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպում<br><br>Ընթացիկ հարցեր | Ամփոփել տարեվերջյան առաջադիմությունը և վարքը<br><br>Կազմակերպել տարեվերջյան էքսկուրսիա | մայիս |

## Դասարանի ծնողական խորհուրդը

| N | պաշտոն | Ազգանուն,անուն | հեռախոսահամար |
|---|---|---|---|
| 1 | ծնողական խորհրդի նախագահ | Սահակյան Անգելինա | 094688572 |
| 2 | ծնողական խորհրդի անդամ | Ղազարյան Ռոզա | 093424418 |
| 3 | ծնողական խորհրդի անդամ | Միքայելյան Լուսինե | 094187258 |
| 4 | ծնողական խորհրդի անդամ | Պապեյան Մելինե | 093532185 |
| 5 | ծնողական խորհրդի անդամ | Դավթյան Լուսինե | 098323827 |

# Դասղեկի հիմնական պարտականությունները

Դասղեկը հանդիսանում է աշակերտների մտավոր և անձնային աճի կարևորագույն երաշխիքը: Դասղեկի գործունեությունը ուղղված է այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նպաստում են աշակերտների կողմից ուսուցման, շփման և անձի զարգացման պրոցեսում սոցիալ-հոգեբանական գիտելիքների արդյունավետ յուրացմանն ու օգտագործմանը: Դասղեկը՝

- իրականացնում է երեխաների հոգեբանամանկավարժական հետազոտում, բացահայտում նրանց զարգացման անհատական առանձնահատկությունները,
- ուսումնասիրում աշակերտների ընդունակությունները, հետաքրքրություններն ու հակումները՝ երեխաների հետ աշխատանքը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով,
- անցկացնում է աշակերտների հետ անհատական զրույցներ՝ ուսուցման, կյանքի, մասնագիտական կողմնորոշման, ինքնադաստիարակման, մեծերի և իր հասակակիցների հետ փոխհարաբերությունների հարցերի շուրջ,
- աշխատում է դասարանում առողջ հոգեբանական մթնոլորտ ստեղծելու ուղղությամբ,
- փնտրում ծնողների հետ համագործակցելու արդյունավետ միջոցներ,հրավիրում է ամենամսյա հեռավար ծնողական ժողովներ: Ծնողների առաջարկությունների և դիտողությունների մասին հաշվետվություն է հանձնում փոխտնօրենին,
- կազմում է աշխատանքային ծրագիր 1-ին կիսամյակի համար,
- մասնակցում է փոխտնօրենի կողմից կազմակերպված խորհրդակցություններին և սեմինարներին,
- կիսամյակի վերջում հանձնում է հաշվետվություն կատարած աշխատանքի մասին,
- անցկացնում է հեռավար դասղեկական ժամեր՝ դասացուցակով նախատեսված ժամերին,
- աշակերտների կողմից թույլ տված կարգապահական խախտումների մասին անմիջապես զեկուցել տնօրենին՝ նրա հետ որոշելով պատժամիջոցը,
- օրինակելի վարք և բարձր առաջադիմություն ունեցող սաներին խրախուսելու մասին զեկուցագիր է ներկայացնում տնօրենին.
- հետևում է սաների հաճախելիությանը, աշակերտի երկարատև բացակայության դեպքում (3 օրից ավելի) պահանջում ծնողից բժշկական տեղեկանք հիվանդության մասին,
- վարակիչ հիվանդությունների դեպքում անհապաղ տեղյակ պահում դպրոցի բուժքրոջը,
- համավարակով պայմանավորված՝ դասամիջոցներին լինում է իր դասարանի աշակերտների հետ և վերահսկում է աշակերտների դասարանից դուրս գնալը
- յուրաքանչյուր օր հետևում է երեխաների հագուստին և նրանց կողմից հիգիենայի կանոնների կատարմանը
- անհրաժեշտության դեպքում ազատում աշակերտին դասերից՝ տնօրենի թույլտվությամբ:

*Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները*

1. *Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)*

*6-րդ դասարանում սովորում են 28 աշակերտ՝ 10աղջիկ,18 տղա,երկտարեցի աշակերտ չկա:Աշակերտներ համախմբված են ու ունեն լավ վարք:Դասարանի աշակերտները ունեն նախասիրություններ,հաճախում են սպորտի,պարի,նկարչության խմբակների: Դասարանում կան տարբեր նախասիրություններ ունեցող, գեղարվեստական և մարզական խմբակներ հաճախող աշակերտներ:*

*2.Դասարանում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում՝*

- Աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն:
- Կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների վերլուծություն, համակարգում, կարգավորում:
- Դասարանական կոլեկտիվի կենսագործունեության փուլերի/ կիսամյակ/ և միջոցառումների պլանավորում, նախապատրաստում, իրականացում, արդյունքների ամփոփում, *վերլուծություն (դաստիարակչական ժամեր, տեղեկատվական ճեպազրույցներ, ստեղծագործական միջոցառումներ և այլն):*

*Ուղղորդել աշակերտական ակտիվի աշխատանքը;*

*3. Հայեցի դաստիարակություն*

Ձևավորել գիտակցական մոտեցում հայրենիքի, նրա անցյալի, ներկայի և ապագայի հանդեպ՝ պատմական և ազգային արժեքների հիման վրա սովորողների մեջ զարգացնել ազգային ինքնագիտակցությունը:

Ձևավորել հայրենասիրական ոգի, զարգացնել հայրենիքի նկատմամբ հպարտության, մեր լինելիության, գոյի անբեկանելի հավատ,

Զարգացնել և խորացնել հայրենի երկրի պատմությունն ու ավանդույթները

4.*Հոգևոր դաստիարակություն*

*Քրիստոնեության պատվիրաններն ուղղված են մարդու հոգևոր կատարելագործմանը. դրանք պատգամում են լինել բարի, արդար, անաշահախնդիր, առաքինի, ձեռք մեկնել ընկածին, սիրել Աստծուն և մերձավորին: Այդ պատվիրանները ձևավորում են հոգևոր բարձր հատկանիշներ և բարոյականություն: Քրիստոնեությունն, ամբողջապես նպատակաուղղված լինելով մարդու բարոյական մաքրությանը, քարոզում է և՛ մարմնի, և՛ հոգու առողջություն, անբասիր կեցություն:*

*Աշակերտին ծանոթացնել եկեղեցական տոներին և մասնակցել այդ տոներին;*

### 5. Գեղագիտական դաստիարակություն

*Դպրոցն ու ուսուցիչը դպրոցականի գեղագիտական, հոգևոր աշխարհի կերտողն են, գեղեցիկի զգացողության մշակողն ու ներարկողը: Գեղագիտական դաստիարակության համակարգում կարևոր դեր են խաղում էքսկուրսիաները դեպի գեղեցիկի աշխարհը՝ էքսկուրսիաներն ու արշավները, դիտումները, բնության երևույթների վերլուծումը: Այդ կերպ՝ երեխաները տեսնում են թե ինչպես է ծնվում գեղեցկությունը, լսում բնության երաժշտությունը*

### 6. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

*Երեխայի ռազմահայրենասիրական դաստիարակությունը առավել արդյունավետ իրականացվում է այն դպրոցում, որտեղ ստեղծված է դաստիարակչական ամբողջական համակարգ:: ռազմահայրենասիրական դաստիարակությունը հարգալից վերաբերմունք է դաստիարակում ազգային ավանդույթների, հավատ ներշնչում Հայաստանի և նրա ապագայի հանդեպ: Դպրոցում կազմակերպել միջոցառումներ, բաց դասեր, հրավիրել մեր ազատամարտիկներին՝ սեփական օրինակով եւ պատմություններով երեխաներին ոգեշնչելու:*

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը բազմաշերտ գործընթաց է, որը չի սկսվում և ավարտվում դպրոցում կամ չի սահմանափակվում մեկ առարկայով: Այն փոխանցվում է ոչ միայն ռազմագիտության, այլ բոլոր առարկաների միջոցով և միջառարկայական կապերի ակտիվ փոխգործակցությամբ: Այս գործընթացում յուրաքանչյուրն ունի իր ուրույն դերակատարումը: Հայրենասիրությունը բացարձակ արժեք է :

### 7. Ֆիզիկական դաստիարակություն

Ազգային դպրոցի ֆիզիկական դաստիարակությունը, որպես ընդհանուր դաստիարակության անբաժանելի մաս, նպատակաուղղված է անձի բազմակողմանի զարգացմանը, ֆիզիկական կատարելագործմանը և կենցաղում առողջ ապրելակերպի հաստատմանը:
Յանրակրթական դպրոցում ֆիզիկական դաստիարակությունը իրականացնում է փոխադարձաբար միմյանց հետ կապված հետևյալ խնդիրները.
1) աշակերտի ներդաշնակ ֆիզիկական զարգացում,
2) առողջության ամրապնդում, օրգանիզմի կոփում, բարձր աշխատունակության բարձրացում,
3) դպրոցականների մեջ բարոյական բարձր հատկանիշների դաստիարակում,

### *8.Աշխատանքային դաստիարակություն*

Ուսումնական աշխատանք: Այն իրականացվում է ամենօրյա կրթական պրոցեսում `բոլոր դասաժամերի ընթացքում: Ուսումնական աշխատանքը համարվում է երեխաների աշխատանքային գործունեության տեսակներից ամենաբարդը: Պահանջում է մեծ կամային ջանքեր, երկարատև կենտրոնացում, համբերատարություն, համառություն և նպատակասլացություն: Աշխատանքային դաստիարակությունն անհրաժեշտ է իրականացնել բոլոր դասաժամերին. սովորեցնել աշխատել. այս խնդիրը պետք է լուծել թե ՛լեզվի և գրականության, թե ՛աշխարհագրության և թե պատմության դասերին: Յուրաքանչյուր դաս պետք է կառուցել որպես աշխատանքի ուսուցման դաս `ձևավորելով և զարգացնելով ուսումնական աշխատանքի հմտությունները:

### *9.Բնապահպանակա և դաստիարակություն*

Մարդը բնության մի մասն է:Նա իր կենսագործունեությամբ կապված է բնությանը

Երեխան պետք է ապահովված լինի հոգեբանական և հասարակական միջավայրի լավագույն պայմաններով , որոնց ստեղծողները մենք՝ մանկավարժններս ենք: Երեխայի էկոլոգիական մտածելակերպի ձևավոման գործընթացը փոխկապակցված է մարդու էկոլոգիայի տեսության հետ:Էկոլոգիական կրթության ծրագիր խնդիրը երեխաների շրջակա միջավայրի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի ձևավորումն է, բնության հետ շփման ,, բույսերի ու կենդանիների նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի դրսևորումը: Բնության միջոցով դաստիարակել երեխային, նշանակում է ձևավորել որոշակի գիտելիքներ, վերաբերմունք, մտածողություն , աշխարհաճանաչում,աշխարհասիրություն ,գեղարվեստական ունակություններ:

# 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

## Երեխաների թիվը դասարանում

10աղջիկ

18 տղա

1. Ընտանիքների

թիվը լրիվ կազմով՝

24

բ) ոչ լրիվ կազմով՝ 4

Անապահով ընտանիքների թիվը՝8

| N | Սոցիալապես անապահով երեխաներ | Աշակերտական խորհուրդ |
|---|---|---|
| 1 | Սերգեյան Հովսեփ | Ավագ՝Էլեն Առաքելյան |
| 2 | Սերգեյան Աշոտ | Անդամներ՝ |
| 3 | Սիմոնյան Արման | 1.Բաբաջանյան Արամայիս |
| 4 | Մկրտչյան Արտավազդ | 2.Դավթյան Ռաֆիկ |
| 5 | Խաչատրյան Արման | 3.Թեմուրյան Էլեն |
| 6 | Եղիազարյան Զավեն | |
| 7 | Զադոյան Նատալի | |
| 8 | Դարբինյան Արշակ | |

3.Բազմազավակ ընտանիքների

թիվը՝1

4. Դժվար դաստիարակվող

երեխաներ չկան

Դաստղեկ_ Մարիա Ղուկասյան